ՀԻԱՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» օրաթերթի հավելված

1991 թ. Մարտ: № 16: Գինը՝ 50 Կոպ.

ՉԱՐԵՆՑ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՈՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈ
«Տեառապատիրաս» (հատված)

Քեզ եմ կանչում ես արդ, ինչպես Նարեկացին՝
Հղում եմ ողբս Քեզ՝ սրտիս խորից,—
Ինչպես շյուղն է հղում շունչն իր նարից—
Իրեն տեսիլ՝ ճեռվում ճառնած Արագածին...
Ինչպես դողդոջ մի շյուղ բարակածիլ՝
Մի երգեցիկ ցողուն-օվկիանում բերի՝
Ես դաշտերում անծիր իմ հրկիզյալ երկրի,—
Արձագանք չեմ լսում իմ երգածի...
Բայց ես գիտեմ, որ դու՝ շնչով ստեղծարար,
Ինչպես անձրև վարար՝ անեզրական արտում,—
Ոչ մի մժեղ կամ շյուղ — չես թողնելու ծարավ...
Ես երգեցիկ եղեգ,— ինչու՞ այսքան արտում
Պիտի դողամ լույսիդ անեզրության հանդեպ,—
Երբ երբեմ չես եղել դու այդքան հենգ...

ՇԻՐԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊՈՄՊԵՅԸ

(Սկիզբը՝ «Հիշողության» №№ 14—15-ում)

Ձեր գողգոթան եղավ դպրոցը ձեր...
Ձեր ծաղկաբերը բաբիկներին մեռնեմ...
Ձեր լուսաբաց աչիկներին մեռնեմ...
Դուք, որ լույս էիք երազների բողբոջի մեջ,
Դուք, որ հույս էիք ազգի պաղաբերման,
Դուք, որ Կենաց ծառը պիտի նոխ զարդարեիք,
Հիմա ինչ եք դարձել,
Զգայ-չհասնեի...
Կուրանայ-չտեսնեի...
Զառանցանք է, ի՞նչ է, չեմ հասկանում,
Թե իրական ես կամ՝ նիշտ է, այս ամենը,
Երկրաշարժը, ժամը, կոծանումը...
Մանուկ մարիամիկներ,
Մանուկ մարիամիկներ,
Ձեր Գողգոթան եղավ դպրոցը ձեր...
Իմ ձեռքերի վրա,
Իմ կարված այս ձեռքերի վրա
Դուք մարեցիք ինչպես գույներ ծիածանի՝
Ոսկեծամիկ-ծաղիկ ու ծիրանի...

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

Լուսանկարները՝ Հմ. Կարապետյանի և Վ. Կոռովի

ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՕՐԵՐԻ ԽՐՈՆԻԿԱ



Լուսանկարները՝ Հմ. Կարապետյանի

ՍԻՐՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ

ԱԶԱՏ ԵՎ ԱՐԱՔՍՅԱ ԾԻԾՑԱՆՆԵՐ

ԱԶԱՏ ԵՂԻԾԻ ԾԻԾՑԱՆԸ ծնվել է 1910 թվականին Արևմտյան Հայաստանում: 1915 թվականին կորցրել է բոլոր հարազատներին ու ծնողներին, ընկել որբանոց: Խորհրդային կարգերի հաստատումից հետո եկել է Հայաստան, սովորել Կոմիտասի անվան երաժշտանոցում, այնուհետև աշխատանքի անցել Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում:

Քաղաքի միակ երգահանն էր, Հայաստանի երգահանների միության անդամ, Կումայրիի երգչախմբային ընկերության նախագահը: Ծիշյանը բազմաթիվ խմբերգերի, սիմֆոնիկ ստեղծագործությունների, ռոմանսների, պիեսների և մանկական երգերի հեղինակ էր: Ամավոր երկրաշարժը անավարտ թողեց սիմֆոնիկ ընդվզախմբի համար գրվող երաժշտության վերջին հնչյունները: Ծիշյանը իր սիրելի կնոջ՝ ԱՐԱՔՍՅԱՅԻ հետ այդ օրը գտնվում էր տանը:

1922 թվականին, Ալեքսանդրապոլում, հացթուխի ընտանիքում է ծնվել ԱՐԱՔՍՅԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՄԵՔԻՆՅԱՆԸ (ԾԻԾՑԱՆԸ): Սովորել է տեղի երաժշտական դպրոցում, ապա՝ երաժշտական ուսումնարանում: Այնուհետև կրթությունը շարունակել է Կոմիտասի անվան երաժշտանոցում: Ուսումը ավարտելուց հետո աշխատանքի է անցել հայրենի քաղաքի երաժշտական ուսումնարանում, որպես դաշնամուրի և երաժշտական գրականության դասատու: Եղել է բաժնի վարիչ, պարգևատրվել մի շարք պատվոգրերով, արժանացել է վատակավոր ուսուցչի պատվավոր կոչման: Մինչև 1988 թվականի դեկտեմբերյան աղետը նա անմնացորդ նվիրումով աշխատեց ուսումնարանում և իր գիտելիքները հաղորդեց սիրելի սաներին:

ՔՈՒՅՐ ԵՎ ԵՂԲԱՅՐ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ՝ ծնված 1971 թ. մարտի 5-ին, Լենինականում:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ՝ ծնված 1975 թ. նոյեմբերի 28-ին, Լենինականում:

Կարենը ավարտել էր Լենինականի № 14 միջն. դպրոցը, բարձր գնահատականներով: Ուզում էր ընդունվել Լենինգրադի իրավաբանական ինստիտուտ, բայց չստացվեց (երանի ընդունված լիներ): Զարգանց շատ էր կարդում: Բացառիկ հայրենասեր էր, արցախյան շարժման մասնակիցներից: Գիտեր ամբողջ հայոց պատմությունը, չնայած հայերեն կարդալ չգիտեր, որովհետև մինչև 5-րդ դասարան սովորել էր ԳԴՀ-ում:

Կարինեն սովորում էր № 14 միջնակարգ դպրոցում: Երազում էր դառնալ ուսուցչուհի: Կարինեն շատ բարի էր, համեստ ու ընկերասեր: Եվ Կարենը, և Կարինեն ան չափ շատ էին սիրում իրենց տունը «Ծառանկյունի» Քաղամասում, որտեղ և կրնքեցին իրենց մահկանացուն, անավարտ թողնելով իրենց երազանքները:

ՄԻ ՈՂՋ ԴԵՐԴԱՍՏԱՆ

ՎԱՀԱԳՆ ԱԼԵՔՍԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է Լենինականում, 1918 թ.։ Սովորել է Լենինգրադում, աշխատանքին զուգահեռ հեռակա կարգով ավարտել Մոսկվայի մարքս-լենինյան համալսարանը։

Աշխատել է Լենինականի հայամթերման բազայում որպես տնօրեն, ապա նույն պաշտոնն է վարել Ախուրյանի «Հայկոոպում»։ 1960 թվականից աշխատանքի է անցել Ախուրյանի նորաստեղծ կենցաղ կոմբինատում։ Շուրջ 32 գյուղերի կենցաղային աշխատանքները ղեկավարել երկար տարիներ և եղել սիրված ղեկավար։ Իր ազնիվ աշխատանքով սատար է կանգնել մարդկանց։ Վահագն Հարությունյանը ջերմ ու հոգատար ծնող էր, սիրված հարազատների կողմից։ Ողջ հոգով կապված էր երեխաների և թոռների հետ, ուրախություն սեղաններին առանձին համ ու հոտ էր տալիս նրա հումորն ու վարակիչ ծիծաղը։ Ավա՜ղ, նա էլ դարձավ արհավիրքի անմեղ զոհերից մեկը։

ԿՈԼՅԱ ԱԼԵՔՍԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1933 թվականին, Լենինականում։ Լինելով տան փոքրը, միշտ օգնել է մյուսներին, եղել է, այսպես ասած, ազգ- բարեկամի «շտապ օգնություն»։ Հոգատար էր ու ծնողասեր, ուշադիր էր քույրիկների՝ Սիրուշի և Վարդուշի նկատմամբ, միշտ հոգում էր նրանց կարիքները։ Կոլյա Հարությունյանը ձեռներեց ու խոսքաշնչ մարդ էր, զբաղվել է բը ռնցքամարտով, շահել բազմաթիվ մեդալներ ու պատվոգրեր, ինչպես նաև երիտասարդ հասակում եղել է մի խաչաբաղ Ա. Շարոյանի խմբում։

Աշխատում էր կահույքի ֆաբրիկայում կնոջ՝ Քնարի կի հետ։ Այստեղ էին հանդիպել իրար ու կազմել երջանիկ ընտանիք։ Երեք երեխաների հայր էր, սիրված ու հարգված ծնող։ Ահեղ երկրաշարժի օրը աշխատանքի վայրում կնքեց իր մահկանացուն՝ անհուն վիշտ պատճառելով հարազատներին ու բարեկամներին։

ՔՆԱՐԻԿ ԽԱՉԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1934 թվականին Լենինականում և ամուսնու հետ աշխատում էր կահույքի ֆաբրիկայում որպես ավագ հաշվապահ։ Հրաշալի մայր էր, հայ կին, բարի ու առաքինի։ Ամուսնու ամեն նալավ խորհրդատուն էր, կյանքի հավատարիմ ընկեր։ Այդ ահավոր օրը նա էլ ամուսնու հետ իր մահկանացուն կնքեց աշխատանքի վայրում։

ՎԱՀԱԳՆ ԱԼԵՔՍԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է Լենինականում, 1918 թ.։ Սովորել է Լենինգրադում, աշխատանքին զուգահեռ հեռակա կարգով ավարտել Մոսկվայի մարքս-լենինյան համալսարանը։

Աշխատել է Լենինականի հայամթերման բազայում որպես տնօրեն, ապա նույն պաշտոնն է վարել Ախուրյանի «Հայկոոպում»։ 1960 թվականից աշխատանքի է անցել Ախուրյանի նորաստեղծ կենցաղ կոմբինատում։ Շուրջ 32 գյուղերի կենցաղային աշխատանքները ղեկավարել երկար տարիներ և եղել սիրված ղեկավար։ Իր ազնիվ աշխատանքով սատար է կանգնել մարդկանց։ Վահագն Հարությունյանը ջերմ ու հոգատար ծնող էր, սիրված հարազատների կողմից։ Ողջ հոգով կապված էր երեխաների և թոռների հետ, ուրախություն սեղաններին առանձին համ ու հոտ էր տալիս նրա հումորն ու վարակիչ ծիծաղը։ Ավա՜ղ, նա էլ դարձավ արհավիրքի անմեղ զոհերից մեկը։

ԿԻՆԸ՝ ՍԻՐՈՒՇ ՄԵԼՈՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել է Լենինականում, 1922 թվականին։ Տասնամյակն ավարտելուց հետո ամուսնացել էր, ուներ երկու զավակներ՝ Ջեմման և Վարդանը։ Մեծ դժվարությամբ մեծացրել էր որդիներին, ահ ու դողով հետևել նրանց ամեն քայլին, սակայն...մահացավ, իր հետ տանելով նաև զավակներին։

ՋԵՄՄԱ (ԼԱԼԱ) ՎԱՀԱԳՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծրն վել է Լենինականում, 1944 թվականին, սովորել և աշխատել է հայրենի քաղաքում, ամուսնացել է Ախուրյանում, դարձել հոր աշխատանքային ընկերը։ Դեկտեմբերի 7-ին Ջեմման եղել է Ախուրյանի կենցաղ կոմբինատի շենքում, հարի վանի խնդրանքով ինչ-որ գրություն մեքենագրելիս, որտեղ էլ... Նրա երկու դուստրերը որբացան, մնացին առանց մայրական գուրգուրանքի, առանց Ջեմմայի գեղեցիկ ու տաք մայրի, առանց նրա կատակների...

ՎԱՐԴԱՆ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1947 թ., Լենինականում, սովորել ԵրՊԻ-ի մասնաճյուղում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Ախուրյանի ֆինաժնում որպես ինժեներ։ Այնքան բարի էր, հոգատար ծնողների հանդեպ, որ շատերի համար օրինակ կարող էր ծառայել։ Սիրված զավակ էր ծնողների կողմից Վարդանը, լավ հայր ու ամուսին։ Նրան էլ չխնայեց չար արհավիրքը, իսկ կինը՝ Գայանեն և որդին՝ Վահագնը, հրաշքով փրկվեցին մահվան ճիրաններից։

ՔՐԻՍՏԻՆԵ ՎԱՐԴԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ այն նորաբողջոջ ծաղիկներից էր, որ չհասցրեց կյանք տեսնել, երջանկանալ ու երջանկացնել ծնողներին. մինչդեռ ի՞նչ հույսեր կային կապված նրա հետ։ Թիթեռնիկ էին նրբանախվանում տանը, առնս գիտեին, որ թիթեռի կյանք է ունենալու...

Այդ տարի ընդունվել էր երաժշտական № 1 դպրոց, դաշնամուրի բաժինը և ինչպես էր ուրախացել նոր գրված դաշնամուրի համար։ Շատ էր սիրում ծնողներին, պապիկին, տատիկին ու եղբորը։ Ժամերով նստում էր Կոմիտասի նկարի առաջ ու մեծի խորաթափանց հայացքով ինչ- որ բան մտածում, սուզվում մտքերի մեջ, թվում էր, թե զրուցում է նրա կարի հետ։ Դեկտեմբերի 7-ին հոր վզին փաթաթված փոքրիկ Քրիստինեն «Կապրպ» երգն էր երգում, երբ...։

ՀԵՐԻՔՆԱԶ ՕՐԲԵԼՈՒ ՍԱՐԳՍՅԱՆ

Սիրելի մայրիկ, ինչո՞ւ թողեցիր ինձ ու քույրիկիս, ինչո՞ւ այդքան անսպասելի հեռացար, չէ՞ որ դու այդքան երկար էիր տատանվել ու ընպասել մեր աշխարհ գալուս՝ մոտ 14 տարի։ Մի՞թե նրա համար, որ այսօր որբ թողնեիր մեզ։ Մայրիկ ջան, հայրիկը ամեն ինչ անում է, որ լավ զգանք մեզ, որ մեր աչքերը չարցունքոտվեն, որ... չզգանք քո պակասը։ Գիտե՞ս, փետրվարի 5-ին իմ ծնունդն էր ու հավաքվել էին բոլորը, բայց... չկայի՛ր դու, բաց էր քո տեղը ու ասես դատարկ էր տունն ինձ համար։

Հիմա տեղափոխվել ենք նոր թաղամասում կառուցված մեր բնակարանը, դու մեզ հետ ես՝ մեծ նկարով, որ փակցրել ենք մեծ սենյակում ու ամեն պահ նկարիդ նայելիս զգում եմ քո ներկայությունը մեր կողքին։ Կանցնեն տարիներ, մենք կըմնծանանք քույրիկի հետ ու կմտնենք կյանք, բայց դու ուրիշ էիր ու որքան էլ ջանան փակել մեր արցունքների ճանապարհը, միևնույն է, դրանք կհոսեն ներս՝ անձայն ու դանդաղ։ Խնդրում եմ, մայրիկ ջան, մեկ-մեկ այցի եկ գոնե երազում՝ քո բարի ժպիտով, խորհուրդներով։

Հերիքնազ Սարգսյանը ծնվել է 1947 թ. Լենինական քաղաքում։ Դեկտեմբերի 7-ին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Երևանի հիվանդանոց, սակայն բժիշկների չարչարանքը, կոիվը մահվան դեմ զուր անցավ։

ՄԱՅՐԱՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Է՛ԴՈՒԱՐԴ ԳԵՎՈՐԳԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Որտե՞ղ ես, որդիս, ինչո՞ւ ձայն չես հանում, հոգնել եմ սպասելուց, սակայն հավատում եմ, գիտեմ, որ կգաս էլի, որ ապրում ես, կաս, միայն թե երևի շատ հեռու ես ու չես կարող պատասխանել, գտնել մեզ, մինչդեռ ես սպասում եմ, սպասում ամեն օր, ամեն վայրկյան, որ հանկարծ կբացվի դուռս ու... կտեսնեմ քո գեղեցիկ պատկերը նորից»։ Սա Էդուարդի՝ այս գեղեցիկ պատանու մոր ամենօրյա մրմունջներն են՝ խառնված աղոթքից ու Աստծուն ուղղված խոսքերին։ Հավատում է մայրը կորած որդու վերադարձին, հավատում է ու սպասում արդեն երեք տարի։ Այո, սպասում է, որովհետև աչքերի առաջ է վի բավոր որդին և այն «Վիլիս» ավտոմեքենան, որը նրան հասցրեց օդանավակայան դեկտեմբերի 8-ի առավոտյան ժամը 11-ին, իսկ այդ օրվանից ոչ մի լուր, ոչ մի տեղեկություն Էդուարդից։ Ու խնդրում է մայրը, աղաչում են ծնողներն ու հարազատները, որ մեքենայի տերերը (երկու հոգի) կամ Էդուարդին տեսնողները, նրանից որևէ լուր ունեցողները անպայման տեղյակ պահեն հավատով ընպասող հարազատներին (հայտնել՝ Ֆուրմանովի նրբ. 4, տուն 8)։ Ասում են, թե մայրական սիրտը չի կարող սխալվել, երանի չսխալվեր նաև Էդուարդի մոր՝ Մարիա Վարդանյանի սիրտը... Տա Աստված։

Էդուարդ Գևորգի Մուրադյանը ծնվել է 1965 թվականին, Լենինականում։ Սովորում էր ԵրՊԻ-ի Լենինականի մասնաճյուղում, սիրված և հարգված էր ընկերների կողմից, ծնողների միանուագար որդին էր։

ՆԵԼԼԻ ԼԵՎՈՆԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ծնվել է 1961 թ.։ Միջնակարգ կրթություն ունի։ Նելլին 1980 թվականին ամուսնացել էր, ապրում էր գոհ, երջանիկ։ Տնային անտեսուհի էր և ոչինչ չէր խնայում երեխաների դաստիարակության համար։

Դաժան երկրաշարժը խլեց նաև Նելլիի կյանքը։ Արթուրին և Վիտալային թողնելով որբ, երդանքները՝ թերի ու անկատար։ Մաղկուն հասակում հուշ դարձած կինը կըմնա հարազատների հիշողության մեջ։

ԵՐԵՔԸ ՄԵԿ ՀԱՐԿԻ ՏԱԿ

ՌՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԻ ԳԱԼԵՄՋՅԱՆԸ ծնվել է Լենինականում, 1971 թվին։ Սովորել և ավարտել է Մկրտիչ Աբմենի անվան դպրոցը։ Ռուզաննայի երազանքն էր ուսումը շարունակել մանկավարժական ինստիտուտում, մանկավարժ դառնալ։ Ջիրականացավ սակայն երա վաղեմի իղձը։

Բայց փոքր եղբայրը՝ Դավիթը երկրաչարժից անմիջապես հետո ընդունվեց քրոջ երազած բուհն ու երա պատվին որոշել է միայն բարձր գնահատականներ ստանալ, լավ մանկավարժ դառնալ։

Ռուզաննայի մայրը՝ ՄԱՆԻԿ ՆԻԿՈՂԱՅԻ ԳԱԼԵՄՋՅԱՆԸ ծնվել է 1951 թ.-ին, աշխատել է № 5 տնային կառավարչությունում, հարգված էր կոլեկտիվի ու բնակիչների կողմից, բարեխիղճ



ու պարտաճանաչ աշխատող էր։ Տանը, մեծ հոգածությամբ խնամում էր հիվանդ սկեսրայրին՝ 102-ամյա ՄԻՆԱՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱԼԵՄՋՅԱՆԻՆ, որը քաղաքում ժողովրդի կողմից հարգված ժողովրդական բժիշկ էր։

Նրանք երեքը միասին իրենց մահկանացուն կնքեցին շաբաթ դեկտեմբերի 7-ին, Նեկրասովի փողոցի № 1 շենքի այրված, մոխրացած փլատակների տակ։

ՊԱՏՄՈՒՄ Է ՀՈՐԵՂԲԱՅՐԸ

ԴԱՎԻԹ ԵՎ ԼԻԴԱ ԱՆԴՐԵՅԻ ՉԱՔՐՅԱՆՆԵՐ

Քույր և եղբայր Չաքրյանները ծնողների միակ հույսն ու ապավենն էին։ Թե տղան և թե աղջիկը ակնառու հաջողություններ ունեին ուսման մեջ։

ԴԱՎԻԹԸ ծնվել էր 1974 թվի ապրիլի 9-ին, սովորում էր Արտյոմ Պետրոսյանի անվան միջն. դպրոցի 9-րդ դասարանում։ Նա իր գերազանց առաջադիմությամբ և օրինակելի վարքով լավ օրինակ էր ծառայում դասընկերներին։ Լավ ձեռք ուներ, օգնում էր արհեստավոր հորը։

ԼԻԴԱՆ ծնվել էր 1977 թ.-ի ապրիլի 12-ին, նույնպես սովորում էր Արտյոմ Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցում։ Ուսման առաջավոր էր, շատ էր սիրում երաժշտություն, բնավորությամբ կայուն, մարդամոտ ու ընկերասեր աղջնակ էր։

Անչափ դժվար է այժմ համակերպվել երկու հրաշք մանուկների անդառնալի կորստի հետ։ Որդեկորույս մոր աչքը շարունակ դռանն է, ուր որ է կբացվի այն և պայուսակները ձեռքներին ներս կմտնեն իր բալիկները։

ԱՐՏԱԿ ՎԻԼԻԿԻ ՂԱՅԹԱՆՋՅԱՆ

Ավերիչ երկրաշարժը ոչ մեկի մոտով էլ անհետևանք չանցավ, ամեն մեկին մի վիշտ ու տխրություն պատճառեց։ Անմասն չմնացին Վիլիկ և Լաուրա Ղայթանջյանները, որոնք բարեպաշտ, աստվածահաճո մարդիկ էին, ամեն տարի մատաղ էին անում, բաժանում հարևաններին...

1976 թվականին էր ծնվել ԱՐՏԱԿ ՎԻԼԻԿԻ ՂԱՅԹԱՆՋՅԱՆԸ։ Եղբոր՝ Արկադիի հետ սովորում էր Կիրովի անվան դպրոցում։ Բոլոր առարկաներից առաջադիմում էր, շատ էր սիրում ձկնորսությամբ զբաղվել, հայրենի բնության մեծ սիրահար էր։ Պատանին զբաղվում էր տարբեր մարզաձևերի մարզումներով, հասկասարաչափ սիրելով թե ֆուտբոլը, թե թենիսը, ատլետիկան ու ծանրամարտը, մրցումներում հասնելով նշանակալի հաջողության։ Խելոք ու կարգապահ էր, սովորում էր 7-րդ դասարանում։ Այդ դասարանում 42 աշակերտներից 18-ը զոհվեցին աղետալի երկրաշարժից, որոնց թվում և Արտակը։

ԿԱՐԵՆ ՊԱՅՔԱՐԻ ՍԱՐԴԱՐՅԱՆ

Ասում են, թե աղետը կբտրեց լավագույնների կյանքը։ Եվ դա այդպես է։ Ընդամենը 10 տարեկան էր Կարենը՝ № 20 դպրոցի գերազանցիկ աշակերտներից մեկը։ Աչքի էր ընկնում յուրահատուկ սրությամբ, ուշիմությամբ, խոհեմ էր, չափված-ձևված ամեն ինչում։ Ճանաչողները մեծ ապագա էին խոստանում Կարենին, իսկ դասղեկը մի օր հրճվանքը չէր զսպել ու նրա օրագրում ուղղակի գրել էր. «Ապրե՛ք, ծնողներ։ Ծնորհակալություն»։

Արհավիրքը այս փոքրիկի՝ շատ կողմերով և շուտ ձևավորված մարդու կյանքը ընդհատեց դպրոցում, դասի ժամին։ Եվ մխիթարանքի ի՞նչ խոսքեր ասես ծնողներին, չափահաս քրոջն ու եղբորը։ Չէ՞ որ բոլոր խոսքերը անուժ են այս ողբերգության, մեծ կորստի առաջ...

ՌՈԲԵՐՏ ԳԱՐԵԳԻՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌՈԲԵՐՏԸ դեռ 50 տարեկան չկար, սակայն ավելի քան 30 տարի աշխատում էր Լենինականի կոշիկի ֆաբրիկայում, բանվորից հասել էր հերթի վարպետի աստիճանի։ Նրա «ձեռքի տակով» տասնյակ ճորտասարդներ էին անցել, սովորել մասնագիտության գաղտնիքներն ու վարպետացել։ Նրան կոլեկտիվում հարգում էին շիտակության ու արտաքավության համար, կյանքում շատերին էր նեցուկ եղել նրանց նեղ օրերին...

Աղետի պահին դստեր՝ Անահիտի հետ ֆաբրիկայում էր, ու երկուսն էլ զոհվեցին արտադրամասի փլատակների տակ։

ԱՆԱՀԻՏ ՌՈԲԵՐՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏԸ ծնվել էր 1969-ին, գերազանց գնահատականներով ավարտել № 3 միջնակարգ դպրոցը։ Սիրում էր գիրն ու գրականությունը, մանուկներին և երազում էր հայերենի ուսուցիչ դառնալ։ Սակայն... ընդունվեց պոլիտեխնիկում և աշխատեց կոշիկի ֆաբրիկայում։ Ուզում էր թեթևացնել ծնողների հոգսերը, նաև ճանաչել կյանքը ու մարդկանց։ Ավաղ, երկրաշարժը կիսատ թողեց ջանքն ու կենսասեր, մարդամոտ ու բարի աղջիկ հարուցող բոլոր երազանքները։ Նրա հարազատների, բարեկամների ու ընկերների հիշողության մեջ առհավետ կմնա Անահիտի սիրունատես դեմքը, ձայնը, նաև վարպետ ու արտաքուստ ամուսնքը...

ՀԱՅՈՑ ՊՈՄՊԵՅԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Դուք դալար-դալար շնաշխարհիկ։
Դուք հուրբ-հուրբ արեգակի ոսկի
Հայոց բեժ ամռան կրակ ու հուր,
Դուք բանձր բույրով ծիրանավառ
Հայոց խունկ աշնան բերք ու բարիք,—
Հիմա ձյան տակ եք ու հողի տակ,
Թողնելով մեզ մենակ,
Մեր ձեռքերը դատարկ՝
Դատարկ մեր ձեռքերին հետքը ձեր արյունի...
Մանուկ մարիամիկներ,
Մանուկ մարիամիկներ,
Դուք հողի հետ պսակվեցիք հավերժ՝
Ջարժանացավ անգամ բաղման ավանդական ծեսին...
Ու ասված է ելնում ողբ ու կսկան
Եվ այրերիս առաջ,
Հայոց դժոխքն է իրական՝
Կպրե կարասներով...
Երկու ժամ է անցել,
Բայց թե երգս չկա-Շիրակունիս չկա,
Երկու ժամ է անցել,
Ձեռագիրս չկա-Շիրակունիս չկա,
Գյուխգո՞ծոց իմ— Շիրակունիս չկա...
Փլատակի վրա մենք շղթա ենք կազմել.—
Երեսուդ հարկի մի բացվածքի միջից
Փոխանցում ենք իրար մանուկ հրիտասներ,
Փոխանցում ենք իրար մանուկ մարիամիկներ...
Եվ՝ ով ճակատագիր,
Երբ ուժերը արդեն լքում էին ինձ,
Երբ ձեռքերիս վրա հագիվ պահում էի ես՝
Մի պատանու հանգած,
Հենց այդ պահին հանկարծ,
Փոխանցելով՝ իմ ձեռքերին դրին Շիրակունուս...

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՄՎԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Այս լրջմիտ և խոհուն հայացքով մանուկը ծնվել է 1980 թվականի սեպտեմբերի 7-ին։ Սովորում էր Արտյոմ Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի 2-րդ «Բ» դասարանում։ Դասվար Թամարա Մովսիսյանի սիրելին էր Մարտիրոսը։ Ուսման մեջ յուրաքանչյուրում էր բարձր առաջադիմություն և կրում ուսուցիչների ու ընկերների հավակրանքը, հարգանք ներշնչում։

ՇՈՂԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԻՍՊԻՐՅԱՆ (ԽՆՈՒՍՅԱՆ)

Մեվել է 1963 թվականի ապրիլի 12-ին, Լենինականում։ Սովորել է Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում, ապա՝ հաշվապահական դասընթացներում։ 4 երեխայի մայր է եղել։ Երկուսը մինչև երկրաշարժն էին մահացել, մյուս երկուսը՝ ՍԱՔՈՆ և ԳՈՌԻՎԸ զոհ դարձան դաժան աղետին, մոր հետ միասին։ Սիրասուն զավակները հազիվ էին բոլորել իրենց կյանքի 3 և 4 գարունները։

Այլևս չկա գեղեցկադեմ և բարձրահասակ, բարի ու քնքուշ մայրը՝ իր զավակների հետ։

ՍՈՆՅԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՐԴՈՅԱՆԸ (ԻՍՊԻՐՅԱՆ) ծընվել է 1959 թ. փետրվարի 4-ին, Լենինական քաղաքում, ավարտել է Բաֆֆու անվան միջնակարգ դպրոցը և Լենինականի բժշկական ուսումնարանը, ապա աշխատանքի անցել «Լենշինհոբ» տրեստի պրոֆիլակտորիա- առողջարանում որպես բուժքույր։

Ամուսնացած էր, ուներ երկու քնքուշ բալիկներ։ Սոնյան սիրված և հարգված էր իր հարազատների և մտերիմների շրջանում։

Սոնյան և Շողիկը, չնայած հարս ու տալ էին, բայց այնքան մտերիմ, այնքան էին իրար սիրում, որ աղե տալի երկրաշարժն էլ նրանց չկարողացավ բաժանել միմյանցից։

ԻՄ ԹԱՆԿԱԳԻՆ ԱՄՈՒՍԻՆ, ԱՆԳԻՆ ԲԱԼԻԿՆԵՐ...

Ինչպիսի անջնջելի դառնություն թողեցիք դուք իմ սրտում։ Կյանքում ոչ մի բան այնքան ծանր չէր ինձ համար, որքան մենությունը, որը նման է ձկան չորանոցի, որը չորացնում է մարդուն, զրկում հումորից, ժպիտից, հույսից, հավատից, արևից և կենսուրախությունից։

ՀԱՄԼԵՏ ՄԻՇԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Մեվել է 1965 թվականին, Կումայրիում։ Ընդամենը 18 տարեկան էր, երբ հանդիպեցինք և ընտանիք կազմեցինք։ Իր անհուն ու ջերմ սրտով Համլետը նվիրված էր երաժշտությանը և երազում էր իր երկու բալիկներին կապել երգ-երաժշտության հետ, նրանց մեջ սեր արթնացնել ժողովրդական երգարվեստի նկատմամբ։ Ավաղ, չհասցրեց...միշտ խոսում էր իր ճակատագրի մասին...սիրտը վկայում էր, որ շուտով հրաժեշտ է տալու կյանքին։ Դաժան պատահականությամբ նրա կանխազգացումը իրականացավ։ Զարագույժ աղետի օրը նա գտնվում էր Շիրակացի փողոցի 13 շենքում՝ ծնողներիս տանը, ուր իր մահկանացուն կնքեց մորս, եղբորս և մեր երկու մանկիկների հետ... Փրկվեցի միայն ես, այն էլ հաշմանդամ դառնալով...

ԱԼԻՍԱ ՀԱՄԼԵՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Իմ անմոռաց անգին Ալիսիկ,
Կույր եմ ես կարծես, ոչինչ չեմ տեսնում,
Իմ կյանքն առանց քեզ տխուր ու լռիկ,
Լուսերես բալիկ, սիրասուն բալիկ...

Անմեղ հայացքով ու աչքերով աղջնակս տակավին չէր բոլորել իր երրորդ տարին, ծնվել էր 1985 թ. դեկտեմբերի 25-ին։ Համառորեն ձգտում էր օգնել ինձ տնային գործերում։ Լայիս էր, խոսվում, երբ չէինք թողնում որևէ գործ անելու, նույն ինքն ինձ հետ լվացք էր անում և ուրախանում էր, որ շորը քամելիս շրաշիթները ցայտում էին։ Իր ձեռքով փռում էր չորացնելու և ուրախանում էր, ժպտում անմեղ հայացքով։ Տիկնիկներին քնեցնում էր և մեղ զգուշացնում, որ լռենք, «չխանգարենք» նրանց քունը։ Տիկնիկները հիմա էլ կան, կա նաև նրանց «խնամողը»։ Սակայն չկա Ալիսիկս... Նա խորը քուն է մտել հոր, եղբոր, տատիկի և քեռու հետ։

ԱԼԻԿ ՀԱՄԼԵՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Մեվել էր Կումայրիում, 1987 թ. մարտի 16-ին։ Նոր էր ոտքի ելել, ինքնուրույն քայլելու առաջին փորձերն էր անում։ Հրապուրվում էր միայն խաղալիք ներով։ Լիաթոք ծիծաղում էր, երբ խաղում էինք իր հետ։ Ավաղ, անմեղ մանկիկս ծիծաղը հանգեց դաժան աղետի փլատակների տակ։

Հիմա նրանց փոխարեն խոսում եմ միայն ինձ համար սուրբ մասունք մնացած լուսանկարների հետ։

ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐԻ ԲԱԼԱՄՈՒՏՅԱՆ

Հայկանուշը ծնվել է Հայրենի եղերքից շատ հեռու, Նեղոսի ափին, Հեռավոր Եգիպտոսում։ 1964-ին իրա կանացավ նրա և հարազատների բաղձանքը։ Հայկանուշը ավարտեց № 34 դպրոցը և անցավ աշխատանքի։

Միշտ բարեխիղճ ու նվիրված էր ծնողներին, բարեկամներին, ընկերներին, ընտրած գործին։ Վերջին տարիներին աշխատում էր կահույքի ֆաբրիկայում։ Սիրված էր բոլորի կողմից։ Բարեհամբույր, պատրաստ՝ բոլորին օգնելու, հոգատար՝ յուրաքանչյուրի հանդեպ։ Միայն թե արհավիրքը դաժան գտնվեց նրա հանդեպ. այդ չարաբաստիկ օրը շատ գործընկերների հետ նա էլ մնաց կահույքի ֆաբրիկայի փլատակների տակ։ Գրեց Հայկանուշը՝ միայնակ թողնելով սգավոր մորը և իր պես անբիծ հիշատակ...

ՀԱՅՈՑ ՊՈՄՊԵՅԸ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

Աչքերն ուռած ու փակ,
Դեմքին կապույտ բծեր,
Քիթ-բերանը լցված ավազ ու հող,
Աջ ձեռքի մեջ՝ ամուր սեղմած գրիչ...
Աջ ձեռքի մեջ՝ ամուր սեղմած գրիչ,
Շիրակունիս-երգս իմ բևեռի վրա
Փլատակից իջա...
Հիմա, երբ առջևս եմ գրում այս աղեսյալ,
Շիրակունիս-երգս իմ կողքին է դարձյալ,
Նստած նկարում է, նկարում է անվերջ՝
Բիբլիական լեռան պատկերը սուրբ...
Հույսով, հայրենիքով լիքն է առնուտեղս
Եվ Մասիսն է դեմս...
Ախ, սև քարով շարված,
Սև շիրմաքար դարձած 16 դպրոց...
16-սև նշան-նակատագիր.—
Հողը ճոճվեց, գնաց մեկ՝ աջ, մեկ՝ ձախ
Ու թվերն այդ ետ ու առաջ ընկան՝
Հայոց հարցի այն կետերի նման,
Որ 61 կոչվեց...
Ու այդ թիվն էլ փլվեց ու ճապաղվեց այնպես,
Որ ես վախենում եմ թե եռանիշ դառնա...
Հիմա ասում են թե,
Մասիսների ձյունը հալվում-իջնում է վար,
Դառնում աղի-արցունք.—
Որդեկորույս հայ մայրերի արցունքներն են դրանք,
Գլուխ-գլուխ արցունքներն են դրանք այն մայրերի,
Որոնք էլ չեն կարող ու չեն լալու...
Եվ ասում են նաև,
Մի գյուղական հյուղի ոտի վրա,
Հայտնվել է ինքը՝ Տիրամայրը
Մանուկ Քրիստոսը գրկում,
Ինչո՞ւ,
Ուշ է աննեբելի,
Կեղծ է պատկերը քո,
Եվ սուտ մխիթարանք խոսքերը քո...
Ոչ մի մեղանչում ու մեղա,
Աստվածընդդեմ այս խոսքերիս համար,
Քանզի վկա եղա,
Իմ մայր ժողովրդի ոսկե մի հատվածի
Անմարդկային, և, ուրեմն՝ աստվածային կործանումին՝
Այսինքն ձեր, Ս, Տեր և Տիրամայր...
Քանի-քանի մանուկ Քրիստոսներ,
Քանի-քանի մանուկ մարիամիկներ դուք բաղեցիք—
Զխղճացիք անգամ միանուցարին—
Մանուկ ընկերոջս-Արտակ Գևորգյանին
Որ իր չարանենի խաղերով դեռ՝
Գեբեզմանիս մեջ էլ պիտի ինձ շարշարի...
Ես ինչ ասեմ հիմա,
Էլ ինչ ասեմ արդեն,
Երևանում՝ Արտակ Ոսկանյանին՝
Որի խաժ աչքերում ողբերգարեն
Խառնվել են իրար վիշտ ու ցասում,
Որի սրտապատառ հառաչանքից անգամ՝
Մասիսներն են հեռվում փշաքաղվում...
Ես ինչ պատմեմ հիմա,
Ինչպես պատմեմ արդեն
Խանգաղանց մեծ այրին,
Որ պատմության պատգամավոր գրչով,
Իմ կողքին է կանգնել, ինչպես կովի պաճին,
Եվ մեր Մխիթարի նման ոգեկոչում է ինձ,—
Պինդ կաց, պինդ կաց,—
Պինդ եմ մեծ խանգաղանց...
Սակայն,
Էլ ինչ ասեմ արդեն,
Ի՞նչ կարող եմ ասել,
Ես Հովհաննես Մելքոնյանին,
Որի ծննդավայր-հայրենիք-մայրը,
Իր մի ոտքով արդեն գերեզման է իջել...
Ինչ կարող եմ ասել բացի հետևյալից.—
Գյումրին կար ու մնաց,
Լենինականը գնաց...
Սա է մեխը ժանգոտ՝ մեր հոգու մեջ խրված,
Սա է մեխը ժանգոտ, մեր սրտի մեջ խփված,
Սա է մեխը ժանգոտ մեր աչքերում գամված,
Մեր խղճի մեջ՝ անխիղճ...
Նեռ էր, հրեշավոր Հրեշի այս տարին...
Մենք միշտ շիտակ ճստել, խոսել ենք ծուռ,
Բայց եկեք ծուռ ճստենք, խոսենք շիտակ:—
Ի՞նչ մեղք ունի տարին,
Երբ հրեշը անկուշտ մեր տան մեջ է նստած.

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՀԱՅՈՑ ՊՈՄՊԵՅԸ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

Մեր ճերսում է նստած,—
Ցեմենտակեր հսկա, մի սճավար հրեշ
Երկաթ-բետոն խժռող մի սհռելի հրեշ,
Ամենակեր, զազիր, մի մարդակեր հրեշ,
Մի մարդակեր հրեշ...
Որտեղ ես դու հիմա ազնիվ Դիոգենես,
Տուր մեզ քո տակառը գիներույր ու հարմար,
Տուր մեզ քո տակառը փայտե ու հասարակ,
Որ չկանգնի երբեք մեր առջի դիմաց
Անգամ աշխարհակալ Ալեքսանդրը Մեծ...
Ի՞նչ է, մերժում ես ինձ, եղբայր Դիոգենես,
Հետո ի՞նչ, որ դատարկ տակառներ շատ ունենք,
Քեզ ինչ, որ մենք դատարկ տակառներ շատ ունենք...
Հայոց Պոմպեյն սհա-Լենինականը—
Փլատակների կույտ...
Հայոց Պոմպեյն սհա-իմ դեմ փռված՝
Սգավոր-սև ձյուներով,
Խամրած իր գույներով,
Ընկած գմբեթներով,
Դուռ ու դարպասների քարե ժանյակների
Բզիկ-բզիկ եղած նախշ ու զարդով...
Փլատակ է շուրջ դին
Եվ Աբազած մայրը նստած փլատակին...
Հայոց Պոմպեյն է սա,
Պոմպեյ-Լենինականի վերջին օրը...
Հազար տարի առաջ—
Այսպես կործանվել է նրա քույրը-Անին,
Որ դարձել է մրմուռ հազար տարվա հեռվից
Որ դարձել է մարմար մի քարեղեն
Ժողովրդի առաջ...
Ավերակ է դարձել,
Ջջիկների բույն է դարձել ավեր Անին,
Եվ խարտակված այուն ու խոյակներին՝
Գորշ գայլերի ոռմակներն են ոռնում...
Ավերակ է դարձել,
Ավերակ է Անին տրղեն հազար տարի՝
Քանի որ տեր չունի ու ժողովուրդ...
Բայց դու Գյումրի քաղաք,
Որ եղել ես խտացումը ցեղիս,
Որ եղել ես ավանդաբար պարկեշտ,
Որ եղել ես պատվին՝ պատվախնդիր,
Որ եղել ես ու կաս տաղանդավոր,
Որ եղել ես ոսկեձեռիկ արվեստավոր,
Որ եղել ես շուայտորեն դու շեն,
Քո սեղանի ներ ս միշտ սրտաբաց,
Որ եղել ես խոսքի խաղով անկրկնելի,
Որ միշտ ձեռքդ ես պահել ու պաճպանել՝
Հայոց անմեռ երգի մենաշնորհը մեծ,—
Նորից պիտի հառնես մեր ձեռքով ու ձիրքով,
Նորից պիտի հառնես քարե երգով:
Պիտի հառնես շքեղ—
Քո դասական շենք-շնորհքով,
Բնիկ նիստ ու կացով,
Արդար աղ ու հացով,
Ու ֆայտոնի ակը պիտի ֆռռա՝
Հարս ու փեսին տանի նկեղեցի,
Ջանգուլակ ու սուրմա պիտի արծաթաձայն
զնգան ու զրնգան
Եվ խենթացած խինդից ձիերը վրնջան,
Պիտի ծնունդ լինի ու հարսանիք՝
Առաջվա պես շախով,
Առաջվանից շուխով,
Պիտի ծնունդ լինի ու հարսանիք՝
Որ դեղոր ճաք տա ու պատովի զուռնան...
Պիտի հառնես դու առավել
Քո մեջ պիտի տեսնենք գծերը տրդատյան.
Որ կարոտն էլ Անու մենք քեզանից առնենք:
Դու կհառնես՝ իմ հարազատ, իմ սեր,
Իմ հայրենի քաղաք նվիրական,
Քանզի դու տեր ունես ժողովուրդ
Եվ հայկազյան ոգի հերոսական...
Մի բուռ ժողովուրդ ենք,
Մի ափ հայրենիքով,—
Արյաւեաքամ եղանք...
Մի ափ հայրենիքով,—
Հուսախաբ-սուտ եղանք...
Մի բուռ ժողովուրդ ենք,
Մի ափ հայրենիքով,—
Հայրենաքարափ եղանք, ինչպես ասոված ծնեռն էին ուզում,
Եղանք այնպես, ինչպես բշնամին էր ուզում...

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)

ԳԱՅԱՆԵ ՍՈԿՐԱՏԻ ՄԻՐԱԳՅԱՆ

Գարզ ու սովորական կենսագրություն. ծնվել է 1961-ին, ավարտել № 4 միջնակարգ դպրոցը, ապա ամուսնացել ու դարձել հայկական մի նորածիլ ընտանիքի մայր՝ իր սիրասուն երեք երեխաներով: Ափսոս, ընդամենը 27 գարուն ապրեց Գայանեն, զարմանահրաշ այդ հայուհին, որ սրտի խորքում շատ երազանքներ ուներ: Մշտ տաժպիտ էր ու բարի, առաքինի ու հոգատար: Դեկտեմբեր յան աղետին երկու երեխաների հետ տանն էր, և հաջողել էր իր մարմնով ծածկել փոքրիկներին, փրկել նրանց կյանքը: Սա կայն ինքը չփրկվեց: Ու այս աշխարհից հեռացավ «փրկեք ցեք ինձ» աղաչանքը շուրթերին սառած: Իսկ փրկել ոչ մեկին չհաջողվեց, ու հիմա նրա գա փսկները մեծանում են առանց մայրական խնամքի...

ՎԱՉԳԵՆ ՍՄԲԱՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1959 թվականի հուլիսի 31-ին: Սովորել և ավարտել է Ավետիք Իսահակյանի անվան դպրոցը, ապա ուսումը շարունակել շինարարական տեխնիկումում: Այնուհետև մեկնել է բանակային ծառայության: Ապա ուսանել Երևանի Լենինականի մասնաճյուղում: Ուսմանը զուգահեռ աշխատում էր տրիկոտաժի արտադրական միավորման կարի արտադրամասում:
Աղետի օրը ինստիտուտում էր: Պատրաստվում էր պետական քննությունների և այդպես էլ չհաջողեց հանձնել վերջին՝ ավարտական քննությունները: Ամուսնացել էր և սրտի թրթիռով էր սպասում առաջին ուրախությանը՝ նորածնին: Սակայն չարաբաստիկ երկրաշարժը զրկեց նրան հայր լինելուց: Չանցած մեկ ամիս ծնվեց դուստրը, ապրելով մի քանի օր, Անին մահացավ:

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԱՖԱՐՅԱՆ

Այս գեղեցիկ հայուհին ծնվել է 1952 թվականին, Լենինական քաղաքում: Ավարտելով Նեկրասովի անվան միջնակարգ դպրոցը, այնուհետև կրթությունը շարունակել է առևտրի ուսումնարանում: Այնպես սիրում էր իր աշխատանքը «Մանկական աշխարհ» հանրախանութում, հաճախորդներին սպասարկում էր սիրով, համբերությամբ ունկնդրելով նրանց պահանջներն ու ցանկությունները և իր պատրաստակամությամբ գոհացնում նրանց:
Սուսաննան ամուսնացած էր, գոհ ու երջանիկ իր կյանքից: Բայց բնությունը չար խաղ խաղաց կյանքով առլեցուն այս կնոջ հետ. տարերային աղետից զոհվեց աշխատատեղում, թերի թողնելով երազանքներն ու իղձերը բոլոր:

ՄԱՐԻՆԵ ԲԱԲԿԵՆԻ ՂԱՋԱՐՅԱՆ

Ծնվել է 1956 թ. հունիսի 21-ին, Լենինականում: Սովորել է Կիրովի անվան № 2 միջն. դպրոցում, ապա բարձր առաջադիմությամբ ուսումը շարունակել Երևանի բժշկական ինստիտուտի դեղագործական ֆակուլտետում, նշանակում է ստացել դեղատների վարչությունում, այնուհետև տեղափոխվել № 2 դեղատուն, որտեղ էլ աշխատեց մինչև իր կարճ կյանքի վերջին օրը:
Բազմակողմանի զարգացած, կիրթ, մարդասեր, հյուրասեր, ժպտադեմ աղջիկ էր նա, նաև լավ հարս ու մայր: Որտեղ էլ որ սովորել, կամ աշխատել է, վայելել է սեր ու հարգանք, ով էլ դիմել է նրան որևէ հարցով, չի մերժվել: Երեք երեխաների մայր էր: Երկու աղջիկ ուներ, 1988-ին արու զավակ ունեցավ, որը խինդով լցրեց տունը... Չարաբաստիկ դեկտեմբերի 7-ին վերջին ճիչով նա գրկախառնվեց որդուն՝ կրծքով պաշտպանելով Անդրանիկին, բայց ավաղ, ամեն հույս ու երազանք մնաց փլատակների տակ:

ՔՆԱՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՌԻՏԱ ՌԱՖԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Ռիտայի աչքերը լցված էին գալիք օրերի երազներով: Երեխայի էր սպասում և հոգեկան տվայտանքներն էին պարուրել նրան: Հանկարծ վրա հասան երկունքի ցավերը և Ռիտա յին տեղափոխեցին հիվանդանոց: Հարազատներով սպասում էին, թե ե՞րբ կբացվի մանկան ճիչը: Եվ այն լսվեց, լսվեց աղջկա կանչով: Կանչ, որ ձգտում էր ապրելու: Ռիտան ունեցավ երկրորդ աղջիկը:
—Ռիտան ծնվել էր 1966 թվականին, Քալինում: Ամուսնացել էր և տեղափոխվել էին Լենինական: Տարբերային աղետի օրը Ռիտային դուրս էին գրել ծննդատնից և սպասում էր հարազատների գալստյանը, երբ սկսվեց սարսափելին՝ ահեղ երկրաշարժը: Ռիտան իր տեսանուն փոքրիկի հետ մնաց ավերված ծննդատան բետոնյա սալերի տակ:

ՀՐԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծնվել է Լենինականում, 1963 թվականի նոյեմբերի 20-ին: Ժպտադեմ ու ծիծաղկոտ այս աղջիկը սովորել և ավարտել է Բագրատ Ղարիբջանյանի անվան և № 4 երաժշտական դպրոցները: Հրանուշը ուսումը շարունակել է մանկավարժական ուսումնարանում և վերջվել հաշվառման սիրված մասնագիտությամբ: Աշխատում էր կարի արտադրական միավորման № 2 մասնաճյուղում: Հարգված էր կոլեկտիվում և վայելում էր ընկերների սերն ու համակրանքը: Եղել է նվիրված ու հոգատար մայր:
Անասելի ցնցումից տասն օր էր անցել, բայց դեռ չէր գտնվել Հրանուշը: Գուցե ո՞ղջ է դեռ ոմանց նման, հույսի նշույլ էին փայփայում մերձավորները:
Հրանուշն հասցրեց դուրս փախչել, բայց լսելով իր հետ աշխատող կնոջ կանչի ձայնը, հետ վազեց: Փրկելով 50-ամյա կնոջը՝ հերոսի նման զոհեց իր կյանքը, կարոտով թողնելով զույգ երեխաներին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՎ ՇՈՂԱԿԱԹ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆԵՐ

«ԵՐԱՆԻ ՁԵՋ...»

Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանը ծնվել է 1982 թվականի նոյեմբերի 12-ին:1988 թվականի դեկտեմբերի 5-ին նրանց տոյն հյուր էր եկել հորեղբայրը, հմուտ ջրմուղագործ Սամվելը, որին Հովիկը կարճ ու կրճատ ձևով՝ «հոպար» էր ասում:

Կալինինի պողոտայի № 13 շենքի 9-րդ բնակարանը, ուր բնակվում էր Հովիկենց ընտանիքը, նոր էր նորոգել: Տունը գեղեցկացել էր, լուսավորվել, մայրիկը կահավորել էր լավագույն ձևով: Եվ ահա փորձանք. նկուղում ջրեր են լցվում, պատերը փչանում են: Ոգնության է եկել Սամվել «հոպարը» ու իրեն հատուկ բացարտությամբ ասում է.

—Դարդ մի անի, հարս ջան, ամբողջ նկուղի խողովակները կփոխեմ, իմ գրպանից, ոչ մի հարևանիցդ կոպեկ չեմ վերցնի: Կսարքեմ ու ամեն ինչ լավ կլինի: Շողակաթ հարսն էլ հուսադրված անցել էր գազի սալիկի մոտ, նրբերշիկներ էր դնում կրակին: Նորոգողները վերջին մանր պակասներն էին լրացնում: Տանը կենդանի իրարանցում էր, ուրախ առօրյա, աղմուկ: Հենց այդ պահին լսվեց մանկական մի սրտաճմլիկ կանչ.

—Էրնեկ ձեզի...

Դռան մեջ կանգնած էր վեցամյա Հովիկը ու մի տեսակ զարմացած, կարոտով նայում էր մարդկանց: Բոլորը շուռ եկան տագնապած, նայեցին երեխային: Ի՞նչ է պատահել:

Նա չշարունակեց: Երանությամբ ու ցավով նայեց բոլորին՝ կողմնակի մի հայացքով, իրեն դուրս դնելով ասես անցուդարձից: Հետո դանդաղ մոտեցավ աթոռին նստած հորեղբորը ու սկսեց փաղաքշել նրան, «Հոպ ջան, հոպար ջան», ասելով քսում էր այտը հորեղբոր այտին:

Հոպար ջան ինձ երկու օր (պարզելով երկու մատը), միայն երկու օր տար ձեր տուն:

—Իմ տունը լավը չէ, վերևից հող կթափվի, առանետ կա, ինչ պես տանեմ,— գորովանքով արդարացավ ու պատճառաբանեց Սամվել հորեղբայրը:

—Հոպար, որ նեղն ընկնեմ, ինձ կփրկե՞ս:

—Հովիկ ջան, քեզ ի՞նչ պի տի լինի, որ չփրկեմ...

Երկու օր ուշ, 1988 թվականի դեկտեմբերի 7-ին, ճիշտ այդ նույն ժամին Հովիկը չը կար: Նա փլվող, իջնող տան պատերի հետ հեռացավ այս աշխարհից իր մոր՝ Շողակաթի հետ:

Պատմում է հորեղբայրը ու նախատում իրեն. «Գետինը մտնես, էրեխու շուրթերով ասված ինքն էր խոսում: Ինչպե՞ս էլ երանի տվեց բոլորիս, շեմի վրայից, ասես չուզենալով մի քայլով անցնել երկու օր անց ողջ մնացող մարդկանց սահմանագիծը»:

—Երանի ձեզ...

—Նեղն ընկավ Հովիկս, ասում է Սամվելը, բայց հնարավոր չեղավ փրկել: Ախր ինչպես չտարա: իմ հետս, կիսաբանդ, 120 տարվա տունը, որը երկրաշարժից չփլվեց...:

ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԻԳԻ ԻԳԻԹՅԱՆ

Ծնվել է 1946 թ. սեպտեմբերի 20-ին Լենինականում: Սովորել և 1966 թ. ավարտել է Գոգոլի անվան միջնակարգ դպրոցը, ապա՝ հաշվապահական դասընթացները:

Շատ էր երազում երեխա ունենալ: Երազանքն իրականացավ 1979 թ.: Նա վայելում էր ամբողջ բարեկամների, ուսումնական և աշխատանքային ընկերների սերն ու համակրանքը:

Այդ օրը Անահիտի ազատ օրն էր, ստիպել է Տաթևիկին դասի չգնալ, բայց աղջիկը չի լսել և գնացել է դպրոց ու հրաշքով փրկվել: Տարաբախտ մայրը զոհվել է տանը:

ԳԱՅԱՆԵ ՎԱՐՈՍԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ավանդությունը ասում է, թե Աստված չէր հասցնում ամեն տեղ լինել, ամեն կանչողի կողքին հայտնվել ու ստեղծեց հա վասարազոր մի էակի՝ մորը:

Բնական է, որ նրանից թանկ ու սիրելի ոչինչ չկա այս աշխարհում: Հողը, որի վրա մենք քայլում ենք, հայրենիքը, որին կարոտում ենք մեկ օր անգամ չտեսնելով, կոչում ենք մոր անունով:

Մեր ընտանիքը վաղ կորցրեց հորս: Ցոթ անչափահաս որդ խաներ անմխիթար վիճակում մնացինք մորս հույսին: Սակայն քույրս՝ Գայանեն չթողեց մեզ հուսահատվելու: Նա դարձավ որբացած մեր քույրերի ու եղբայրների համար մի իսկական մայր: Նա անմնացորդ նվիրվեց, ինչպես մայրն է նվիրվում իր զավակներին: Մեր քույրը զրկեց իրեն կյանքի ամենաբաղցր բարիքներից, նույնիսկ չամուսնացավ, երբ քանիքանի առիթներ եղան: Նրա համար սովորական խոսքեր ասել, նրան հենց այնպես հիշել, նշանակում է մեղք գործել նրա խնկելի հիշատակի առջև:

Մեծ սրտի ու հոգու տեր, կարեկցող ու անսահման բարի, հաճելի արտաքինով մեր քույրը՝ ԳԱՅԱՆԵ ՎԱՐՈՍԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել էր 1922 թ. Լենինականում, ստացել մանկավարժական կրթություն: Նա չէր կարող իր բազմանդամ ու որբացած ընտանիքը պահել ուսուցչությամբ և փոխեց մասնագիտությունը, աշխատեց որպես ԲՄԲ-ի հաշվապահ: Աղետի օրը նա գտնվում էր Գորկի փողոցի № 54 շենքում: Թե ինչպես տարավ այդ վերջին ծանր հարվածը, մեզ համար անհայտ է: Թռավ մեր քրոջ ատողը երկինք և այնտեղից լույս է տալիս մեզ:

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՅՈՎԱ ԽՈՐԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1936 թվականին Ղուկասյանի շրջանի Թորոս գյուղում: Նա 5 տարեկան էր, երբ Հայրենական պատերազմը խլեց հորը: 1958 թվականից բնակվում էր Լենինականում: Գրեթե ողջ կյանքն աշխատեց «Էլեկտրականեցաղսարք» գործարանի մատակարարման բաժնում, իսկ վերջին տարիներին՝ «Էլեկտրոն» գործարանում:

Լյովան օժտված էր մարդկային լավագույն հատկանիշներով՝ լավ հայր, լավ ամուսին, իսկական հայրենասեր, բարի, անարդարության դեմ պայքարող մարդ:

Լյովան շատ էր անհանգիստ տանում իրենց շենքի համար (Գերցենի № 4), որը բարձրահարկ էր, իսկ նկուղային մասը լցված էր ջրով: «Մի օր կփլվի, շարունակ ասում էր նա...»: Եվ փլվեց...

Նա երկու ուրախություն ուներ նշելու, որ թերի մնացին՝ կարոտը սրտում: Ավագ որդին՝ Խորենը ընդունվել էր Կույբիշևի երկաթուղային ինստիտուտ, իսկ կրտսեր որդին ծառայում էր խորհրդային բանակում, որին սրտատրոփ սպասում էր, բայց Սլավիկը ուշացավ ընդամենը 10—15 ժամ և այլևս չտեսավ հորը:

Որդիները մնացին մոր հետ ինչպես և իրենց հայրը իրենց իսկ տարիքում:

ՊԱՏՄՈՒՄ Է ԿԻՆԸ

30 ՏԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ Մ Ե Ջ

Մեր կյանքը վաղանցուկ հեքիաթի էր նման, որ անցավ երկվայրկյանի պես, միմյանց կարոտ թողնելով: Երազի նման անցան ամուսնական մեր տարիները, թողնելով սոսկ քաղցր ու դառն հուշեր...

ՄԻՍԱԿ ԵՂԻԾԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ծնվել է 1937 թ. փետրվարի 15-ին, Ղուկասյանի շրջանի Արփենի գյուղում: Սկզբնական կրթությունը տանցել էր տեղի դպրոցում, ապա ուսումը շարունակել Կումայրիի № 4 միջնակարգ դպրոցում:

Բանակային ծառայությունից հետո մնաց զինծառայության մեջ, զգալով, որ դրանում է իր տաբերքը, իր նախասիրած գործը: Նավատորմում էր ծառայում այնպես սիրով, հանձնարարված զինվորական կարգ ու կանոնին:

Լավ ամուսին էր և այնքան սիրված գործընկերների շրջանում: Ուշադիր և հոգատար հայր էր և հոգ էր տանում, որ երեք զավակները ճիշտ դաստիարակվեն և հասարակության մեջ պիտանի մարդ դառնան: Տղաները՝ Վարուժանն ու Վարդանը գնացին հոր ուղիով, զինվորականներ են: Դուստրը՝ Օֆելյան, ռուսաց լեզվի ուսուցչուհի է:

1988 թ. դեկտեմբերի 7-ը մոայլ բացվեց և իր մահաբույր շնչով ավերեց հազարավոր շինություններ, մահ սփռեց: Տանից դուրս գալիս զգուշացրեցի, որ դուռը փակի: «Հիմա ես էլ վեր կկենամ»,— եղավ վերջին խոսքը: Գնաց հավերժի գիրկը, երկրաշարժի անմեղ նահատակ դարձավ:

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳԱԼՈՅԱՆԸ

Մեկն է երկրաշարժի հազարավոր զոհերից, մի ան մեղ նահատակ, որ կյանքից հեռացավ կյանքը դեռ չճաշակած:

1953 թվականին է ծնվել Մարիետա Գալոյանը, Լենինական քաղաքում: Շատ փոքր հասակից էր սիրում կարողի մասնագիտությունը և երկար տարիներ որպես բանվորուհի աշխատեց տեքստիլ-կարի արտադրական միավորումում: Արտադրամասի պետ Արթուր Կարգանյանը շարունակ գրվատում էր Մարիետայի աշխատանքը: Նա աչքի էր ընկնում մաքուր կարվածքով, արագաշարժությամբ, կողմնորոշվելու ունակությամբ:

Գործընկերուհիները և հարազատները ցավով ու ափսոսանքով են հիշում տարեցտարի իր մահկանացուն կնքած Մարիետա Գալոյանին, հարգելով նրա հիշատակը:

ՄԱՋՄԱՆՑԱՆՆԵՐԸ

ԿԱՐԻՆԵ ԱՐՄԵՆԱԿԻ ՄԱՋՄԱՆՑԱՆԸ ծնվել է 1957 թվա կանին, Լենինական քաղաքում: Սովորել է № 3 միջնակարգ դպրոցում: Ավարտելով Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանը, նա գործի անցավ № 5 երաժշտական դպրոցում: Գիտելիքների և հմտության ու պատրաստակամ բնավորության համար նրան սիրում էին երեխաները, ծնողները, ողջ կոլեկտիվը: Կարինեն շատ մարդկային էր, անչափ սիրում էր ծաղիկներ:

Զորեքշաբթի օրերին Կարինեն դասաժամեր չուներ դպրոցում: Չգիտես ինչու որոշեց այդ օրը ՍԵՐԳԵՅԻՆ և ՀԱՅԿԻՆ մանկապարտեզ չտանել, մնալ տանը: Երկրաշարժից անմիջապես հետո, երբ Կարինեի ամուսինը՝ Հայկը վազեվազ տուն հասավ, շենքի տեղում ավերվածություն տեսավ, բայց չկասկածեց էլ, թե իր ընտանիքը մնացել է շենքի փլատակների տակ:

Ծատ խելացի էր վեցամյա Սերգեյը: Նա դեռ 5 տարեկան ում կարողանում էր հաշվել և գիտեր հայերեն բոլոր տառերը: Դպրոցը կավարտեմ, ինստիտուտ կընդունվեմ և կգնամ ար տասահման՝ աշխատելու: Ինձ հեռուստացույցով ցույց կը տան,— երազում էր մանուկ Սերգեյը...

Հնգամյա Հայկը շատ էր սիրում մեքենա: Նա կարող էր կանգնած Երևան գնալ-գալ ավտոբուսով և երբեք չձանձրանալ: Չէր սիրում նկարվել և եթե նկարվել է տանեցիների հետ:

Երկրաշարժի 3-րդ օրը փլատակների տակից հանեցին Կարինեին՝ երկու որդիներին փաթաթված: Երևի կամեցել է տարերքից պաշտպանել իր սիրատուն զավակներին, սակայն անզոր է գտնվել երկրաշարժին դիմագրավելու...

Այս ինքնատիպ քանդակն է ստեղծել ԽՍՀՄ նկարիչների միության անդամ, Հայաստանի լենինյան կոմերիտմիության դափնեկիր, քանդակագործ Մկրտիչ Մազմանյանը՝ Կարինեն, Սերգեյ և Հայկ Մազմանյանների շիրիմին:

Այս հզոր ամրաններդ անգամ չդիմացան...

Լուսանկարները՝ Հմ. Կարապետյանի

ՀԱՅՈՑ ՊՈՄՊԵՅԸ

(Սկիզբը՝ 6-րդ էջում)

Տունդ քանդվի ասաված,
Որ մեր տունը քանդուքարափ արիր
Մեր օջախը մարիր,
Թուրդը քամուն տվիր,
Սերմը հողմի բերան...
Մեզ տվեցիր հազար-հազար մանուկ քրիստոսներ,
Մեզ տվեցիր հազար-հազար մանուկ մարիամիկներ,
Որի՞ վրա մենք լանք, որի՞ն թողնենք,
Որի՞ն կանչենք, ասա, որի՞ն փնտրենք,
Ինչպե՞ս և ինչ անենք...
Կորուստ բառը այն չէ,
Զոհված բառը այն չէ,
Ո՞ր բառերով պատմեմ, որտեղից բառ գտնեմ,
Երբ որ բառեր չկան
Ու չեն կարող լինել...
Հայոց Պոմպեյն էր սա...
Հույզի, ցավի, վշտի, կորուստների
Երկրաշարժը անա ցնցում է ինձ
Բոլոր իր բայերով՝
Սիրտս դարձնելով անտանելի
Ցավ-ցասումի էպիկենտրոն...
Եվ Վեզուվի նման ժայթքում է սիրտը իմ՝
Ցավի լավայի տակ թաղելով ինձ...
Բայց ես մամառելով ցավի խորխորատում,
Ոգիս ի բուն՝ ելնում եմ վեր...
Այսպես ամեն հայի սիրտ է ժայթքում հիմա՝
Իբր ցավը հիշ էր,
Նոր ցավի տեր դարձանք,
Իսկ վաղվեր մեր բշնամին կանգնած՝
Ոգու երկրաշարժի էր սպասում...
Բայց դա չեղավ ու չէր կարող լինել—
Հայոց ոգին անսասան է հավետ,
Վկա՝ պատմությունը, կերպն ու գերը Հայոց,
Վկա՝ մեր դրոշը եռագույն ու անխոց,
Վկա՝ Հայոց երազանքը արդեն նամփա ընկած,
Վկա՝ Արարատը հավերժացած...
Հայոց Պոմպեյն էր սա...
Ու Վեզուվի նման ժայթքում է ցավը իմ,
Ու կժայթքի քանի դեռ կամ...
Հայոց Պոմպեյն էր սա,
Որից դասեր պիտի առնենք մենք դարեդար
Եվ կառուցենք արդար...
Հազար-հազար մոմեր սրտիս խորանների՝
Քանի դեռ կամ պիտի ցոլան անմար,
Մոմերը մատներիս քանի դեռ չեն հալվել՝
Պիտի վառվեն նրանց հիշատակի համար:
Հազար-հազար աչքեր իմ աչքերում մնաց,
Հազար-հազար ձեռքեր իմ ձեռքերը բռնած,
Այդ ձեռքերը բռնած պիտի քայլեմ,
Այդ աչքերով, ավաղ, պիտի տեսնեմ...,
Մենք դարձել ենք արդեն երկրաշարժի սերունդ,
Ու տանելով ցավը անտանելի,
Տես, կանգնել ենք արդեն հաղթանդամ ու մկունդ,
Ապառաժե կամքով որձ ու համառ՝
Կառուցելու և կերտելու համար:
Մի բուռ ժողովուրդ ենք,
Մի ափ հայրենիքով,
Բայց մենք հայ ենք ծնվել...
Հայ ենք՝ հայավարի պիտի տանենք,
Հայ ենք՝ հայի նման պիտի տքնենք,
Հայ ենք՝ հայանանման պիտի կերտենք,
Հայ ենք՝ հայրենասեր պիտի լինենք,
Հայ ենք՝ հայրենաբաշխ թեկուզ լինենք.—
Եվ հայ պիտի մնանք ու հար լինենք,
Պիտի բրգվենք-պրկվենք,
Պիտի մանր հերքենք,
Պիտի ապրենք, ապրենք,
Հայոց ոգով, ոճով, լեզվով արքայական,
Գոռծով հերոսական,
Որ ծխանի ծուխը լավաշ հացի բույրով՝
Երկինքն ի վեր հայոց իլիկվելով ելնի,
Որպես խարհուրդ կյանքի,
Որ սեպ-սեպագրվի ժայռերն ի վեր հայոց
Մեր ինքնության, լինելության պատմությունը անջնջելի՝
Ի լուր գալիք դարքն ու դարերին,
Ի ցույց և ի խրատ հաջորդ սերունդներին...
Ընդ երկնքան փոզ երգ ելանի,
Ընդ երկնքան փոզ լույս ելանի
Եվ լույսն ի ձեռ վագե խարտյաշ պատանեկիկ...

«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԿՈՒՄԱՅՐԻ ՔԱՂՀԲԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՄԱՏԻՍՅԱՆ Փ. 47